

ԻՐԱՎՈՒՆԿ

ԻՐԱՎՈՒՆԿ ԱՉԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔԵՇԱԲԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱՏԱՆՈՐԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլիտիկայի համար Տարեկան 12 ֆր.
» » Վեցամսեայ 6 ֆր.
Առանձինների համար (երկու քիչ և մեկ չորսով) Տարեկան 14, վեցամսեայ 7 ֆր.
Անկերկայի » 2.60 և վեցամսեայ 1.50
ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐՆԻՒ

Համակ դրամ եռային դրկել հետևելու հասցեով

ԽՈՐԵՔԵՇԱԲԻ «ԻՐԱՎՈՒՆԿ» ԽՈՐԵՔԵՇԱԲԻ — Վ.Ս.Ի.Ա. (Պուլկարիա)

Редакция на ВѢСТНИКЪ

„И правуникъ“

ВАРНА (България)

Rédaction du journal

„Ira vounk“

V A R N A (Bulgarie)

Խմբագրության ուղղության գրությունից ես չեմ դրկուր եւ յարմար դատարանները միայն կը հրատարակուին ամբողջովին կամ մասամբ:
Ծանուցման սղը 20 ամսեայի. երեքին ամսի անգամներու համար 20 0/0 զեղչ կը լինի:

ՄԻՋԱԳԱՅԻՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Ծայրագոյն Արեւելքէ եկած լուրերը Չինի կարեւոր նահանգներուն մէջ մեծ և լուրջ շարժումի մը ժողովրդային առաջ գալուն վերջը և միեւնոյն ատեն հանդէպ այդ հարցին գաղափարային պետութեանց մէջ տիրող յայտնի առհաս. մեծամեծ շարժումներու իր մեզ կիմացնեն:

Ծայրագոյն Արեւելքի հարցի ընթացքին և այդ խնդրոյն շուրջը որք օրին եղած դարձումները երբ նկատի կառնենք յայտնապէս կերելի թէ քիչ ատենէն լուծման մը յանգեալ յայտնի չըլլալէ զատ, ընդհանրապէս տեսնուող չըլլան մըն այլ կը բոլորէ:

Չգիտիմք թաւր. Արեւելքի ապագան որ շատ յատակ չհրեւիր, ներկայ անստոյգ և վտանգալից շրջանին մէջ ամենէն փոփոկ համարուած մէկ միջոցին, ահա Ռուսիա կը հանէ ի, զորքերը Բէքինէն, հաշտարար բանաձեւացութեանց դիրքերուն տալու պատրաստակաւ, երբ ասպին կը զբաղուին ուրիշ կարեւոր պետութիւններ ալ որոնք հակառակ կուզեն ընել:

Ռուսիա իր այս արարքով կուգայ արգարացնել այն կասկածները, որ կային, իրեն դէպի Չինական հարցը ունեցած քաղաքականութեան անշահախնդրութեանը նկատմամբ: Ամենուս միտքն է տակաւին Ռուս կէս պաշտօնական մամուլին այն պոռչուածքները, թէ պէտք է Ռուսիա միւս պետութիւններէն կատարելապէս անկախ դործէ, իր շահերուն համաձայն, որ չեն կրնար հաշտուիլ միւս պետութեանց նկատմամբ հետ:

Կարծեմ սխալ չպիտի ըլլայ ըսել թէ Ռուսական պետութիւնը սկսաւ չինական հարցին նկատմամբ անկախօրէն առաջ տանիլ իր քաղաքականութիւնը միեւնոյն ատեն ալ ձեռքի տակէ շոյել եւ քաղաքները Չին խորամանկ դիւանագիտութիւնը ընդդէմ միւսներուն:

Ռուսիոյ այս ընթացքը միւս պետութեանց զորքը բաւական կը դժուարացնէ, ասկէ զատ, զգալի կերպով կրնայ ալ խախտել անոնց դիրքն ու հիգիւնակութիւնը հանդէպ Չին դաշինքին. որ խիստ ճարտարօրէն գիտէ օգտուիլ ներկայ դրութեանէն:

Թէ ինչո՞ւ, այս ամենքը, Շատ պարզ է: Ռուսիա կուզէ Երկնային կայսրութիւնը ազատ պահել ամեն օտար ազդեցութենէ և միակ իր թեւարկութեան ներքեւ առնել:

Ռուսիա երբ մէկ կողմէն իր գործողութիւնները կանխուէ գաղափար կիցներէն, միւս կողմէ կիմանանք թիպէթի Լամային, Չինացի Պուտտայականներու գերագոյն պետին, պատուիրակներուն Չարին տուած այցելութիւնը, այցելութիւն մը, որ առաջինն է իր տեսակին մէջ:

Խիստ ուշագրաւ պարագայ մ'է տեսնուող, պարագայ մը որ Ռուսիոյ Չինի մէջ ձեռք բերած ազդեցութեան մէկ որոշ աստիճանացոյցն է:

Այսօր Թիպէթի Լամային Չինի է՞ն մեծ դասակարգէն սկսելով երկնից որդիներուն էն տգէտ և մոլեռանգ խաւերուն մէջ անդուլ է ունեցած ազդեցութիւնը: Ամեն Չինացի Պուտտայական, ըլլալ Պոքսէր կամ ոչ, չազատիր Տալայի Լամայի ազդեցութենէն: Տալայի Լամային որ բարեկամական խիստ փառքաւոր տրոտայալուծութիւններ կրնէ հիւսիսային կայսրութեան անհաւոր պետին:

Այս մի քանի պարագան կը բաւէ հանկուցելու թէ ո՞ւր գացած է Ռուսիոյ ազդեցութիւնը Ասիոյ այդ մասերուն մէջ և թէ մինչեւ ուր տեղուաք կրնայ երթալ Չին հարցին նկատմամբ ու միեւնոյն ատեն որչափ վտանգուած են Անգլիական շահերը:

Շատ փոփոկ չըլլան մ'է այս, թէ Չինի հարցին և թէ Ռուսիոյ ներհակ շահ ունեցող եւրոպական պետութեանց համար:

Ինչպէս որ կը տեսնուի Ռուսիա մեծ փութով և ճարտարօրէն առաջ կը տանի իր ասիական ծրարագիծները: Այս օրերս Ռուսական թերթերը կիմացնեն թէ մո-

տաւորապէս պիտի սկսին այն երկաթուղիներուն շինութիւնները, որոնք Թիբէթը, Կոնգոսիան կիցրոն, պիտի միացնեն Թէհրանի, իրանեան մայրաքաղաքին հետ:

Ուշագրաւ ենէ չվրպիւր այն կէտը թէ Անգլիա Ափրիկէի մէջ ազատօրէն տարածուիլ սկսելէն ի վեր Ռուսիա ալ իր կարգին Ասիական երկրներուն մէջ կը քայլ: Թիպէթալ-Օռոմի պատերազմին հետ Ռուսիա ալ սկսաւ Պարսկաստանի համար իր պահեստի ծրարագիծները գործադրութեան դրնել: Ս. Բէթերսպուրկ Պարսից երկիրը 75 տարուան համար ելուստապէս իր ձեռքին մէջ առնելէ և Անգլիական հեղինակութեան հարուած մը տալէ վերջը, այսօր ալ արագօրէն յարգարից կրակի այն ճանքները որ օր մը զինքը դէպի Պարսկաստան պիտի տանին, ուր այնչափ բազմապատկած են իր շահերը և զգալի կերպով ալ պակասած է ապահովութիւնը:

Հաւանաբար այդ պիտուրական գրաւումը շատ չուշանար և Շահը Երկաթուղի խելովին բազդակից կը դառնայ:

Ու այս ամենքը Անգլիոյ Ափրիկէան աշխարհակալութեան հակադիրքն ու հակահարուածն են:

Արեւստահանդէսն ալ կը վերջանայ և իրեն հետ կը վերնայ նաեւ այն քողը որ երկար ամիսներ շատ մը խնդիրներու և վերջերու ծախկողը գործու: Այդ մեծ հանդէսին փակման յաջորդօրէն իսկ թերեւս ոչ հաճելի երեւոյթներ պիտի տեսնուին Բարիզի մէջ: Կենթագրուի թէ Տրէյֆուսեան խնդրոյն վերածագման նախընթաց օրն է, և թէ խուլ ու յայտնի շատ մը կռիւներու, պայքարներու և մինչեւ ցարդ զըս պուած կիւրքերու շարունակութիւնը պիտի տեսնենք:

Վերջացող մէկ երկուշաբթուան միջոցին Եւրոպայի մէջ կարեւոր անցուդարձներն է Կերման Նախարարապետին հրաժարումը եւ Ֆոն Պիւլով կոմսին անոր յաջորդան. ուսումնարար: Գերմանիոյ քաղաքականութիւնը հետզհետեւ Պիլմարքեան շրջանին հետգամաքննող առնելու կը ձգտի և արտաքին աշխարհավարութեան մէջ կը մրցի

հակակշռել այն ուժը որ Նէվայի եզերքէն կուգայ:

Գերմանիա Պիլմարքի անկումէն վերջ իր քաղաքականութիւնը փոխեց զգալի կերպով: Պիլմարքի յաջորդներուն ուղղութիւնը եղաւ ճկուն և պահպանողական աշխարհակալութիւնը և այսպէսով կրքաւ թէ Արեւելքի մէջ մեծամեծ շահեր ձեռք բերել և թէ զաղթա վարերու տիրանալ: Սակայն քիչ ատենէ ի վեր այն է Ֆոն Պիւլով կոմսին արտաքին Գործոց նախարար ըլլալէն ասպին այդ ճկուն քաղաքականութիւնը սկսաւ հետզհետէ կտրուկ եւ կորովի զընացք մը առնել, ուղղութիւն մը որ կերելի թէ ալ աւելի շեշտուելով պիտի շարունակուի ըլլալ նոր նախարարապետին օրով, որ արտաքին գործոց նախարար ալ է:

Սուրին

ՊԱՊԻՈՒԹԻՒՆԸ

Այս աղանդը Պարսկաստանի մէջ ծաւալ գտած աղանդներուն ամենէն զլխաւորն է եւ հոն 3 միլիոնէ անելի դաւանողներ ունի: Բարիքի Ցուցահանդէսին առթիւ գուժարուող կրօնքներու պատմութեան Միջազգային Համաժողովին մասնակցած է մեր ազգայիններէն Զ. Համբարձում Առաքելեան: Սա ըստ փառքանաց Համաժողովին ներկայացուց մի ընդարձակ ուսումնասիրութիւն Պապիներու կրօնքի և անոր ծաւալման մասին, որմէ կը քաղենք հետեւեալ տեղեկութիւնները:

Մահմաականութեան Շիի աղանդը կը դաւանին Պարսիկները և կընդունին թէ՛ տասներկու իմամներէն վերջ ճշմարտութեան և գիտութեան «գուռը» (Պապ) գոյուած է: Մահմաական Պարսիկները, ինչպէս Թիւրքերն ալ, իրարմէ քիչ թէ շատ տարբերող աղանդներ ունին, Սուֆի, Տահրի Տավուսի, Ալ-Ալլահի, իսկ Պապիականութիւնը՝ որ 1854ին ծնունդ առած է, միւսներէն աւելի իր դաւանողները ունի Պարսկաստանի մէջ, նաեւ Կաւկասիոյ, Անգլի-

կասպեան երկիրներուն, Պուխա-
րայի, Կեդրոնական Ասիայ, փոքր
Ասիայ մէջ ալ միլիոնաւոր հետեւ-
ւողներ կան, թէեւ զապտնի առ-
այժմ:

Պապիւթիւնը հետզհետէ իս-
լամ աշխարհին մէջ ծաւալելով,
մոլեռանդ իսլամութեան բարոյա-
պէս ստրկացնող ճշունքները աս-
տիճանապէս կը չէզոքացնէ իր բազ-
մաթաւար աւելի լուսամիտ և ա-
զատ գաղափարներովը:

Պապիւթիւնը իրեն գլխաւոր
երկու սկզբունք ունի իրարմար և
իրարմար (մարդկային սեռին Մի-
նարմար և Համարմարմար):

Պապիւթիւնը հիմնադրուի
Միքայ-Ալի-Մուհամմէտ Երազ
ծնած է 1819 ին և 1850 ին զի-
սատուած է Նասրէտտին Երազին
հրամանաւ, որ ի վերջոյ ինքն ալ
Պապի աղանդաւորի մը դաշոյնին
զոհ գնաց: Պապ անունը ստուած
է հիմնադրին, որովհետեւ օր մը
Երիւնդու և իւլէմանու հետ վի-
ճարանութիւն մը ունեցած է. ա-
ստիք կը պնդէին թէ գիտութեան
և ճշմարտութեան դուռը գոցուած
է, Միքայ-Ալին կը պատասխա-
նէ. « Գիտութեան և ճշմարտու-
թեան դուռը միշտ բաց է, և ես
եմ այդ դուռը, Պապը. այդ օրը
Զուհուր, այսինքն յայտնութեան
օր կ'ընկնայ, զոր կը տօնեն Պա-
պիները ամեն տարի, Մայիս 12
ին:

Միքայ-Ալի ինքզինք « Պապ »
անուանելէ յետոյ, ալ ճանչուցաւ
թէ՛ իստուած անով մարդոց կը
յայտնէր բուն գիտութիւնը ու ճշ-
մարտութիւնը. այդ ատեն (1844)
ինք 25 տարե կան էր:

Ստուածոյ ճշմարտութիւնը յայտ-
նելու համար ստացող այս նոր
Մահադին տեսնելու և անոր պատ-
գաւանները լսելու համար Պարսկաս-
տանի ամեն կողմերէն խուռն
բազմութիւն կը հաւաքուէր իր
շուրջը:

Երի կրօնականներուն գրգռու-
միք Մահադին Երազը ջանաց նախ
խեղադրական միջոցներով ազանգի-
ծաւորման առջեւ առնելու հաշ-
կաւոր աստուածաբաններ Երազ
զրկուեցան, որոնց մէջ էր նաև Երի
կրօնագետը: Աստիք որ կը կար-
ծէին թէ Պապին դէմ առաջին վի-
ճարանութեամբ յաղթական պիտի
եղնէին և իրը սուտ ու կեղծ Մահ-
տի զանի քարկծել պիտի տային,
չարաչար յաղթուեցան. և Երի
մեծ Մուշտէյիտը յայտարարեց թէ
Պապ բուն Մահադին էր և Ստու-
ծոյ քովէն զրկուած: Մուշտէյիտը
իր պաշտօնէն ալ հրաժարելով,
սկսաւ Պապի պատուէրները քարո-
զելու համար Պարսկաստանի ամեն
կողմը պտտիլ:

Այս աղբ օրէն գայթակղութիւնը
սկսեց իսլամ աշխարհի մէջ. Գա-
պիւթիւնը հետզհետէ ծաւալ կը
գտնէր, նոյն իսկ կրօնական մեծ
նշանակութիւն ունեցող Քաղվին
քաղաքին Մուշտէյիտի աղիկին նոր
աղանդը ընդունեց և սկսաւ

« Նամէհրամ » քողը մէկ կողմ նե-
տած, այդ և կողմ մէջ հաւատարու-
թիւն քարոզելու. այս գիւցադնու-
հին Բարիթմ-էլ-Ալին (աչքի լոյս)
գրչով ալ շատ սիրելի եղած էր. ի
վերջոյ բանտարկուած ու գլխա-
տուած է Նասրէտտին Երազին օրով
երբ Պապիներուն դէմ պաշտօնա-
պէս հալածանքը սկսած էր: Պապի
ևս 1850 ին զիստուածեցաւ սակայն
իր մահը աղանդին տարածուելուն
բնաւ արգելք չեղաւ: Ժամանակ մը
Պապիներու տիրելով Պարսկաս-
տանի հսկող կ'ստեղծուէր բայց յի-
տոյ Միքայի և Ռուսիոյ գեապան-
ներու միջամտութեամբ հալածան-
քը դադարեցաւ:

Պապիի զիստուածէն վերջ Պէ-
հա անոր յաշարգից: Մի ալ հա-
լածանքի ատեն Պաղտատ ապա-
տանած ըլլալով, թիւրք կառավար-
ութիւնը զինքը Սքիայ բանտար-
կեց, ուր մեռաւ 1892 ին, Պէհա
յի յաշարգած է իր որդին Ապպաս
որ մինչեւ այսօր Պապիներու պե-
տը կը ճանչցուի:

Գանը Պապիներու վարդապե-
տութեան:

Այս աղանդին հիմնադրին բուն
նպատակն էր իսլամութիւնը բա-
րեկարգել, բայց Պապին յաշարգը
Պէհա կատարեալ յեղափոխութիւն
մը մացուց և իսլամութեան հիմն-
քը քակտեց: Պապիութիւնը հա-
մաժարեկային և ազատական ոգի-
ով օժտուեցաւ:

Պէհա նուիրական գրքեր գրեց
ընդհանուր մարդկութեան մէջ հա-
մարաշխութիւն քարոզող և աշխար-
հային տիրապետութեան գաղափա-
րը անարգող: Ըստ այս վարդապե-
տութեան մարդիկ իրարու հաւա-
սար և եղբայր են մեծ, պզտիկ,
ազնուական ու բամբկ գասակար
գերու բաժանում պէտք չէ ըլլալ:
Ստուածոյ առջեւ ընտրեալ ազգ
կամ չ'ընտրեալ ժողովուրդ չկայ
ամենն այս աղէկ են. մարդկային
սպիտակ, դեղին և սև ցեղեր հա-
ւասար են: Կինը յարգելու է. սա
իր իրաւունքները ունի, զոր պէտք
է ճանչնալ: Ստուածութիւնը փոխա-
դարձ հաւատութեամբ կատարելու
է: Մարդ մէկ կին պէտք է առնէ,
եթէ այդ կինը ամուսն չէ: Հարձ-
պահելը խտտիւ արգիւնուած է: Այ-
րը տառնց կնոջը հաւատութեան
ճամբորդելու չէ, հակառակ պարա-
գային կինը ինն ամիս սպասելէ
յետոյ կրնայ ուրիշ մը հետ ամուս-
նանալ: Անհաւատարմութեան պա-
րագային ամուսնալուծութիւն տե-
ղի կունենայ:

Կինը անձնական ստացուածք կը
նոր ունենալ: Ժառանգութեան
համար մասնաւոր ձեւ մը որոշուած
է. եթէ օրինաւոր ժառանգորդ չը
գտնուի ժառանգութիւնը Արգա-
րութեան պաշտօնատան կը մնայ,
այս Պաշտօնատանը հասարակաց
գործերուն կը հսկէ, գատեր կը
տեսնէ, որք և աղքատ տղաքներ
կը կրթէ ու կը խնամէ:

Պէհա իրեն հետեւողներուն կըսէ
« Դուք մասնաւոր Հայրենիք պէտք
չէ ունենալ, ամբողջ աշխարհը ձեր
Հայրենիքն է, քանի որ մէկ ծա-
ռէ սերսած ճիւղեր և պտուղներ էք »
ուրիշ աղբերու հետ տմուսնութիւն

ներելի է: Գերեզմառութիւնը բո-
լորովին արգիւնուած է: Այլ և ալ
լիզուներ և գիտութիւն պէտք է
սորվիլ: Բազդի կամ ճակատագրի
հաւատը ընծայելու չէ. բնական օ-
րէնքները անփոփոխելի են. մարդ
պարտաւոր է դէպ ի լոյսը և ճշ-
մարտութիւնը յառաջագիծել ջա-
նալ:

Պապիական մը իր բնական երկ-
րին օրինաց հնազանդելու է: Հան-
րապետական կառավարութիւնը նա-
խադրելի է, սեւէ կառավարութեան
ժողովուրդները հաւասար պարտք
և իրաւունք ունենալու են: Աշխա-
տութիւնը ամեն մարդու պարտա-
ւորիչ է, սակայն տկարները եւ
աղքատները հասարակութեան խը-
նամուկու են: Ամեն Պապի անոր
իր բաժինը տալու է:

Պատերազմ ընելու չէ, նոյն իսկ
կրօնքի համար (Ճէհադ). ազգերու
միջեւ վէճերը իրաւարար ատենա-
ներու առջեւ տեսնելու է:

Պապի իր բարոյախօսութեանց
մէջ կը պատուիրէ չի ստել, չի շո-
ղոքորթիլ և կարգիլէ ամուսնութե-
ան և մեծակեաց ճշմարտու-
կան կեանքը:

Խոստովանանք, Մկրտութիւն և
սուրբերու բարեխօսութիւն անքն-
դունելի են Պապիութեան մէջ:
Թիփաւորութիւնը եթէ կընդունի,
առողջապահական տեսակէտով եւ
իսլամներու հալածանքէն զերծ մը
նալու համար է: Աղօթել պէտք
է, բայց ոչ ամեն օր: Պապիները
տան մը մէջ կը հաւաքուին եւ
բարձրաձայն կարճ աղօթք մը կը
ընեն, կերպին և իրենց կրօնագե-
տաց պատուէրները կը կարդան:

Պապիները երեք մարգարէ կըն
գունին, Մուսէս, Յիսուս և Մու-
համմէտ: Բնականացութիւն եւ
մեռելներու համար աղօթելու աւե-
լորդ կը նկատուին: Տարւոյն մէջ
19 օր ծով կը պահեն. ապազայ
կեանքի և յաւիտենականութեան
կը հաւատան, բայց որքայու-
թիւն ու դժուր չին ընդունիլ:
Ամեն ոք իր շորձերուն համար
վարձք կամ պատիժ պիտի առա-
նայ, սակայն ինչ եղանակաւ չի
գիտցուիր:

Այս համառօտ տեղեկութիւննե-
րը կը բուռն ապացուցանել թէ
Պապիութիւնը իսլամութեան շատ
ազատ և լուսամիտ կրօնք մըն է,
որ կոչուած է Պարսկաստանը յի-
շաշարհի:

ԹԵԼԱԿՈՒԹԻՒՆ

ՊՈՒՐԻԱՅ, 4 Հոկտ.

Քաղաքի տեսչապետը հրապարա-
կը տակաւ կենդանաւոր վրայ է.
ցորենի, քարափի եւ ալ գործեր ու
չինութիւններ որոնք տարի մը հետ
զղար առած էին դարձեալ վերական-
գին, ընդհանուր ոգի որութիւն մը բե-
րելով իրենց հետ: Քարափի շինութեան
մէջ կաշխատին այժմ հարիւրաւոր ան-
ձեր ամէն գասակարգէ ու արհեստէ,
եւ ամեն օր ալ նորեր ընդունուելու վը-
րայ են, գործին աւելի զարկ մը տա-
լու եւ փութով վերջացնելու այս հսկայ

աշխատութիւնը որ վեց տարիներէ ի
վեր կը շարունակուի:

Ցորենը, Պարկազի ամենակարեւոր
արտադրի նիւթը, առատ է այս տա-
րի, որուն համար ընդարձակ ամբա-
րանցներ ալ շինուեցան, ուր կ'ստեղծ-
վուին այժմ: Վաճառականներ այժ-
մէն իսկ տեսնուալ գործունէութեան մը
մէջ են եւ մեծամեծ պատրաստութիւն-
ներ կը տեսնեն, յոսամբ որ այս տա-
րի մոտցելով պիտի առնան: Եւ
այն սխալ օրերը երբ շատեր հաց մո-
րալու հարկին մէջ կը գտնուէին: Պար-
ժաւոր եւ բանտար դասակարգէն պա-
րապ մարդ չկայ այժմ, ամենն ալ գոր-
ծի են եւ հասկերին կը շահին, ու ա-
պագային աւելի շահելու ալ յոյսեր ու-
նին: Եւր զորքնարարձ չոգենաւորը
եսուէ եսուէ ս'սին եր'ւիլ, թիւրեւ
մարդու պոկան իսկ զգացուի:

Քաղաքին անուշ Զուր բերելու հա-
մար կազմուած ընկերութեան գործա-
դուլը դեռ կը շարունակուի, բայց
պէտք եղած բանակցութեանց սկսած
են դարձեալ յառաջիկայ դարնան գոր-
ծի սկսելու համար:

Աղբային եկեղեցական եւ վարժա-
րանական գործեր կանոնաւորապէս յա-
ռաջ ընթանալու վրայ են, հակառակ
քանի որ անհատներու սարքած մեքե-
նայութեանց եւ անձնական շահախ-
րոյթի հետ, ի վնաս ազգին, որոնք
արդէն ծանօթ են լրագրութեան ու հա-
սարակութեան: Վարժարանը բացուած
է Սեպտ. ին եւ կանոնաւորապէս կը
շարունակէ իր նոր շրջանը դիպցիլ եւ
օգասուն չէնք մը մէջ որ այս տարի
նոր վարձուեցաւ: Յաւալի է ըսել որ
քաղաքաւորապատկան չէնք մը չունի
եւ ամեն տարի ստիպուած է վարձով
բանել իր վարժարանը: Յոյսեր կան որ
օր մը սեփական վարժարան մ'ալ ունե-
նանք եթէ Թաղական ու Հոգաբարձու
միշտ իրար համկան, ինչպէս էին
անցեալ եւ այս տարի. պարագայ մը որ
յոյժ գնահատելի եւ ուրախութիւն է:

Անցեալ կ'արակի՛ նստիւնոր Հո-
գահանդիստ կատարեցինք ի յիշատակ
բարերար Հագեղոյ Գր. Ջանչեանցի:

Ասկէ աւելի մը յառաջ Թաղական-
ութեան անդամներէն մէկ երկուք պակ-
սած ըլլալով, Ունեան Թովանէն տ-
նուն անհետը որ վերջերս հոս հաստա-
տուած էր, թաղական կըլլայ. այս
մարդը ուղեւոր պարուիլ ազգէն, իր
կինը վարժուի կատարելէ Հոգաբար-
ձութեան եւ կը պահանջէ որ իր որդ-
չած ամսականով ընդունուի վարժա-
րան ու համբայ արուի հին ուսուցչա-
կան խումբին: Հոգաբարձուք եւ թա-
ղական խորհրդոյ միւս անդամը զար-
մանօք կը լսեն այս աշխարհակ առա-
ջարկը եւ ամենայն պազութեամբ կը
մերժեն, որուն վրայ կը սրտմտի մեր
ինքնակոչ Թաղականը, ու կրկին վա-
տարանել ամեն ինչ. կազմակերպուած
գործ մը, ազգային հիմնարկութիւն մը
քանդելու, ձեռնարկներ ընել, որոնց ա-
մենուն ալ ստիպել կառնալ շնորհիւ
թաղական խորհրդոյ միւս անդամնե-
րուն, Հոգաբարձութեան շրջանայեցու-
թեան եւ լոյս ընդունուելութեան:

Մեր պարտականութիւնն է հրապա-
րակաւ զգուշացնել ժողովուրդը քա-
կասէր ազգայիններէ, որոնց համար չի
կայ ոչ մի նախնականութիւն երբ շա-
համուրթիւնը կը խօսի:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Պաղտատէն Գերութեան Գու-
յունեան 20 ոսկի նուէր զրկած է
Բաղէշի Ազգ. որբանոցին, որուն
պատասպարելոց թիւը վերջերս ա.
ւելի շատցած լինելով, Հոգաբար-
ձութիւնը Երբեքուն լուսանկարը
ծանօթ բարեկեցիկներու զրկած էր,
անշուշտ նուէր ստանալու արդար
ակնկոյտութեամբ:

Երբեմն բազմաթիւներն ալ
արտասահմանի մէջ Որբանոց-վար
ժապան կամ քաղաքաբնակ-օսկան
թերթի հիմնած ըլլալու պատճառա-
կաւ վերջերս երկրէ երկիր թափա-
ռիլ սկսած են, միամիտ բարեսէր
ներէ նուէրներ կորզելու ակնկա-
լութեամբ: Եւ ցաւալին այն է որ
այսպիսիներ երբեմն պատճառ կր-
լան իսկապէս նուիրատուութեան
արժանի ազգային հաստատութիւն
ներու ձեռնառուութենէ զրկուե-
լուն:

— Բազմաթիւն Ուսուցչուհի տի
կին Գայեանէ Մատակեանի յու-
ղարկաւորութիւնը պատշաճ չքով
կատարուած է Բերայի Ս. Երբոր
գութեան եկեղեցւոյն մէջ, ուր
ներկայ գտնուած են Պատրիարքը,
մէկ քանի եպիսկոպոսներ և բա-
ւական թուով ազգայինք: Հան-
գուցիչին մարմինը անգամապն-
ծեան հնթարկուած է. բժիշկները
անոր թոքը ու լիարգը առողջ զը-
ռած են բայց սիրտը յոգնութեան
նշաններ կը ցուցնէ եղբւ և մէկ
կողմը խոշորացած և իւզ կապած:
— Վառնայի Որբանոցում ընկերու-
թիւնը ասկէ տասը 11 օր. ոսկի
Պատրիարքարան զրկած ըլլալով, ի
փոխարէն երկու որբ որդեգրած է
մին Վանայ Վարապետ Վանքի և
միւսը Սիբաստիոյ որբանոցին մէջ:

Ընկերութիւնը Ալիայ որբանոցին
խնամակալութեան հետ ալ կը բա-
նակցի, մէկ երկու որբ ալ հոն պա-
տասպարել տալու համար:

Այս Որբանոցում Տիկիններու
հիւրը ևս մտադիր է երկու որբ
ազգիկներ պատասպարել տալու Ազգ.
որբանոցի մը մէջ:

Կար և յաջողութիւն կը մազ-
թենք, և ուրիշ ենք յայտարարե-
լու որ որբանոցում թէ գործադիր
անդամք և թէ Տիկինները անխնայ
կը շարունակեն իրենց այնքան բա-
րեգութիւն ջանքը:

ՊԱՇՏՏՈՆԱԿԱՆ ԱԶԳ

Ի նպատակ Ազգ. երկուսն վարժա-
մանաց կազմակերպուած ձեռա-
գործաց փոխակահանութիւնը տե-
ղի պիտի ունենայ յառաջիկայ կի-
րակի, 15 հոկտ. յետ ատարածան
Ս. եկեղեցւոյ:

Հոգաբարձութիւնս այս առթիւ
կրկին կոչուած կրնէ արգոյ ազգա-
յնոց որ փութան գնել այդ տոմ
սակներէն, որոնցմէ գոյացած հա-
սոյթը յատկացեալ է բազմաթիւ
որբ և աղքատ տղայոց կրթու-
թեան:

Իրկուսց Հոգաբարձութեան
Ազգ. երկ. վարժարանաց
Վ. Ատենադպիր Ատենապետ
Գ. ԿիլիկիՅԱՆԻԱՆ, Թ. ԹՈՒՄԱՆԻԱՆ

ԱԶԳ
ԵՐԿՍԵՌ ՈՐԲ. ԸՆԿ. ՎԱՌՆԱՅԻ

Կը խնդրուի ընկերութեանս այն
անդամներէն որոնք իրենց բաժնե-
գիրներէն պարտք ունին անյապա-
գիմարի հաւաքիչ Պ. Ռուբինին և
թէ ըստ կանոնագրութեանս այդ
անդամները որոնք մինչեւ երեք ա-
միս անվճար կը թողուն իրենց բաժ-
նեգիրները կը դադրին ընկերու-
թեանս անդամ ըլլալէ և ձայն չեն
ունենար յառաջիկայ գումարուե-
լիք Ընդհ. Ժողովոյն մէջ:

Պատիւ ունինք յայտարարելու

թէ, ընկերութեանս վեցամսեայ
լրացած ըլլալով, Բ. Ընդհ. Ժողով
պիտի գումարուի Ազգ. վարժա-
րանի մէջ, որուն օրակարգը պիտի
ըլլայ հետեւեալն:

Ա. Ընդհ. Ժողովոյ Գիւմարի ընտ-
րութիւն:

Բ. Գործ. Ժողովոյ վեցամսեայ
համարատուութիւն:

Գ. Կանոնադրի քննութիւն և
վաւերացում:

Դ. Գործ. Ժողովոյ ընտրութիւն:

Ուստի կը խնդրուի ընկերու-
թեանս արգոյ անդամներէն որ
ներկայ իբր հրաւեր ընդունելով
բարեհաճին ներկայ գտնուիլ ընդհ.
Ժողովին, յառաջիկայ կիրակի
հոկ. 15ին, կէս օրէն վերջ ճիշդ
ժամը 2ին:

Մնամք յարգանք
ի դիմաց Գործ. Ժողովոյ
Ատենադպիր Վ. Ատենապետի
Թ. ՃԱՆԿԻԻԼԻԱՆ Թ. ԲԱՐՍԱՄԵԱՆ
Վառնա 9, Հոգեմարտ 1900

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԻՔ

ԵՐԿՍԵՌԱԿԵՑՈՒԹԵԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ.
Եթէ կայ բան մը որ ամենէն աւելի
կը շահագրգռէ մարդը, ապահովաբար
այն ալ իր կեանքի տեսողութիւնը
գոյշակող պարագաներն են: Ամեն ոք
իր երկայնակեցութեան ֆիզիքական
նշանները իր վրան կը կրէ: Դատ ապ-
րդ մարդը կարճակեցէն կրնայ որո-
շուիլ շատ անգամ վրան նայուելով:

Երկայնակեցութեան առաջին և զը-
խաւոր պայմանն է ուղեղին, որտեղ
թոքերուն և մարտնչական գործարան-
ներուն մեծութիւնը: Եթէ այս գործա-
րանները խոշոր ըլլան իրանը երկայն
և թեւերն ու սրունքները բազմաա-
բար կարճ ըլլան: Այդ մարդիկը նըս-
տած ասեղներն երկայն իսկ կայնած
ժամանակին կարճ կերեւնան: Այդ-
պիսիներուն ձեռքերը երկայն իսկ ա-
փերին քիչ մը կարճ և ծանր, նոյն-
պէս մատներն ալ կարճ են:

Ուղեղը խոքը կը գտնուի, որուն նը-
շանն է ականջի ծակին դած ըլլալը:

Կապոյտի կամ թուխ զարնող կազ-
նեղոյն աչքը որ խառնուածքի չափա-
ւորութեան նշանն է, նոյնպէս երկայ-
նակեցութեան նշաններէ մին է: Խո-
շոր, բաց և ազատ շնչունքը (քթի
ծակ) զօրեղ և մեծ թոք ունենալու
նշանն է: Իսկ նեղ և կէս մը գոցուած
շնչունքները նշան են մանր և տկար
թոք ունենալու:

Ահա ասիկ ասոնք են երկայնակեց-
ները կարճակեցութեան զանազանող է-
ական պայմաններու զխաւոր և ընդ-
հանուր կէտերը:

Անշուշտ բացառութիւններ կրնան
գտնուիլ. սակայն վերը ըստածները
հաստատուած են վիճակագրական ճիշ-
տագոյցներով:

Ա. ՊԱՆԻՆԻ ԳԼԽԱՐԿ ԵՒ ԹՈՒՂԹԷ ԸԶ-
ԳՆՍՏ. — Վերեւիկցի ապակեգործ մը
սկսած է ապակեայ կանացի գլխարկներ
շինել: Այն ապակեները որոնցմէ կ'ապա-
րաստուին այդ նորեկու գլխարկները
մետաքսեղէնի մը գոյնին փափկութիւնը
և պայծառութիւնը ունին: Այս գըլ-
խարկներէն, ինչպէս որ ջուր չկրնար
անցնիլ, նոյնպէս ազատ կը պահէ կայ
ծակնահար ըլլալէ: Զգեստեղէններու
համար գործածուած թուղթն ալ, ձա-
քոնցիներուն շապիկի, անդրապարտի-
քի և ուրիշ ներքին հանգիստներ
պատրաստելու համար իբրեւ կտաւ
գործածուած թուղթն է, որ նուրբ է
և խորշոմաւ: Այս թղթէն շինուած
հանգիստները թէ՛ տոկուն և թէ՛ ճա-
պուկ կրլան:

Այս թուղթը որ մասնաւորապէս թե-
թեւութիւն մը և առաճակալուութիւն
մը ունի, անոր տոկունութեանը վրայ
զաղափար մը տալու համար կը բաւէ
ըսել թէ երբ ձեռքով պատռելու ել-
լենք, գրեթէ կը հանդիպինք այն ընդ-
դիմութեան որքան որ պիտի հանդի-
պենք ձեռնոցի մը մորթը պատռած
ասեղնիս և ակնկիւն՝ այս թուղթը
թաց տան ալ խիստ դժուար կը պատ-
ռի:

ԲԱՐԵՐԱՐ ՄԸ. — Կոմս Երկանուս
Բալֆի, Մաճախատանի է'ն հարուստ
կալուածատէրերէն մին, Բեշտացի,
այս անգամ 125,000 ոսկի արժեքու-
թեամբ ազարակը որ տարին 5000 ոս-
կի հասոյթ կը բերէ կտակեր է, ա-
ռանց կրօնի և ազգի խորութեան աղ-
քատ ուսանողներու ձրի կրթութիւն
տալու համար:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶՈՅԵՐ [23]

(ՊԱՏԿԵՐ ՄԸ ՏԱԿԱՆԱՍՏԱՆԻ ԻՐԱՎԱՆ ԿԵԱՆՔԵՆ)

«Դուք անտուն կանուխ իմ գլխին պէլա՛յ էիք
եկար. ծո՛ խրոպըլ, չէս գիտեք որ քո հօրեղբոր
նման օրական մէկ երկու համալսեր ու խրոպըլնե-
րը հոս կը սասկին. եթէ ևս անոնց ամենուն հա-
մար սիրտ հատցունեմ, ես ալ անոնց ընկեր կըլ-
լամ: Ես այդ սատկածներու քէհեան չեմ, կորի՛ր
սրկէց գուր, գլուխս մի ցաւցնէր» կըսէ Զաքար
էֆէնտին և զոնապաններէն մէկը կանչել տալով,
Դուրդէնը գրասենեակէն դուրս կը հանեն: Բայց
անիկա արդէն յուզուած, զրկուածներու և անկա-
րողներու նկատմամբ՝ գթութեան տան մը և ազ-
պաշտօնեայի մը կողմէ այդ աստիճան գոհակութիւն
ու անգթութիւնը զրապէս տեսնելով, փոքրիկ տը-
ղու մը պէս կը հեծկլտայ, ու կը խնդրէ զոնապա-
նէն՝ գէթ իր հօրեղբոր գերեզմանը ցցնել իրեն:

Զրախաւոր դադաղակիւր՝ առանց բառ մը ար-
տասնելու Գուրգէնի աղկաւէն կը դիմէ «Պալլըզ-
լու» գերեզմանատունը: Դարբանքու թաղի մե-
լամաղձոտութիւնն չեղաող ըղինջքի ծառի մը ներ-
քեւ, կարմիր հողով անխնամ գոցուած հողակոյտ
մի մտառով կը ցուցնէ անոր: Գուրգէնը՝ հուրի խո-
րէն դառնացած, ու իր սոսկալի վիշտը՝ Հիւան-
դանոցի աղա Տնօրէնի անխիղճ վարուելէն զգըլ-
խուած, գրեթէ զգայազերկ կը փռուի այդ անշուք
հողակոյտին վրայ: Իր սրտէն պոռթկացող անհուն

վշտի առատ արցունքներով կ'ոռոգէ այն հողերը,
որուն ներքեւ իր դժբախտ հօրեղբայրը, այնքան
կարօտներով պատկած էր: Կարապետող խեղաղարը,
առանց բան մը զգալու, կոնակը ծառի բունին
տուած, աչքերը մոլորուն ու աննպատակ յաճու-
մով, կը գիտէ այդ սրտածովիկ տեսարանն ու մերթ-
օդի գեղեցկութիւնն ու Գուրգէնի հեծկլտութիւնը
ընթերցելու իրենց ճշուրդը ու ճախրումներով
խանգարող ծտերու ու սարահանքերու նայելով իր
հիւսիսային անգիտութեան ազդեցութիւնով կը ծիծաղէր մե-
քենաբար:

Ի՛

Իրենց սղորմելի սենեակը հօրեղբայր Շահէնի
աղքատիկ անկողնի ու գեղջուկ զգեստներու քով,
գիշերուան խաւարի մէջ, որոյ անեղիւթութիւնը կը
չեղաող երկնքի խիտ առ խիտ սեւ ամպերով, ա-
նընդհատ կաթկթող անհրաժեշտ նման, արցունքի ա-
ղի շիթերը կը կաթկթին անոր բարձի վրայ, ու
ոչ ոք կար հոն որ սրբէր գանգը:

Գիշերուան այդ մթութեան մէջ, ուր ցուերն
ակնի կը սաստկանան ու վերքերը կարիւնին:
Գուրգէնի սրտի վերքէն արեւն կը հոգէր ու մէկը
չկար հոն, այդ «պէքեար» խցիկի մէջ, որ անոր
արեւն լուար և սփոփանաց թեթեւ գեղ մը գնէր
անոր վերքին վրայ:

Իր տաքաբախտ հօրեղբոր տխուր մահը, Հայրե-
նիքի անհուն կարօտը, հէզ Սանամ աստիճանի

ու Շուշանիկի կարօտայից պատկերը, գիշերուան
այդ խուլ խաւարին մէջ, անհատուած վշտի ու
զժնդակ կսկիծի մը դառապարտած էին Գուրգէնը,
ու ցաւօք կը մտածէր ու կողբար որ, իր հօրեղբոր
կիւնն ու փոքրիկ քուրիկը, ուտելիք ու հագնելիք
չունենալէ զատ, թերեւս անխիղճ վախառուին ու
փոխանակին անգթութեամբ բնակարանէ ալ զըն-
կուած, անտէր ու անտիւրական, փոքրցները պի-
տի թափառէին: Այդ հոգեռանջ մտածումները՝
անխնայ կը տանջէին զինք, ու մէկը չկար որ,
այդ սարսափելի վայրկեաններուն քիչ մը մխի-
թաբէր դա՛ն գիշերուան անթափանց խաւարին
մէջ:

Այդ անսիւի մութ գիշերը՝ յաւիտենականութիւն
մը կը թուի իրեն, ու կեանքը խաշտանգանք: 15
օր գրեթէ այդ մեղամաղձոտ տխրութեան մէջ թա-
ղուած, շատ քիչ անգամ դուրս կելնէր: Մէկ քա-
նի ընկերներ ու բարեկամները իրենց անկեղծ ցա-
ւակցութիւնով քիչ մը կը յաջողին մեղմել անոր
սաստիկ վիշտն: Օր մալ վերջապէս, գրեջը՝ ձեռք
կառնէ, Սանամ աստիճանին հօրեղբոր մահուան
բօթը հետեւեալ պարզութեամբ կը հաղորդէ:

ՀԱԶԱՐՈՍ Պ. ՆԱԶԱՊԵՏԵԱՆ

(Շարունակելի)

